<<Զովքի Գ.Շահինյանի անվան միջնակարգ դպրոց>>-ի
Մասնագիտացված կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի
2023-2024թ.տարեկան աշխատանքային պլան

Կազմող՝ ՄԿԱ և ԴԱ համակարգող
Լուսինե Հովհաննիսյան

Հաստատում եմ՝ _____
_____ /Տնօրեն՝Է.Նիկողոսյան/

Առաջին կիսամյակ

Օգոստոս

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	***Օգոստոսի 28-31-ը***	Նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքների ամփոփում՝ հիմք ընդունելով Ուսումնադասատիարակչական աշխատանքի տարեկան պլանը (ՈՒԴԱՊ) :	Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքներն ամփոփվում են մանկավարժական խորհրդի նիստում:	ՄԿԱ և ԴԱ համակարգող
2	***Օգոստոսի 28-31-ը***	Առաջիկա ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում :	Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրերի և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին ու Հաստատության զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:	Տնօրեն ՄԿԱ և ԴԱ համակարգող
3	***Օգոստոսի 28-31-ը***	Հանրակրթական դպրոցի դասարանների կազմավորում:	Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի և ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունում բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգի պահանջները:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
4	***Օգոստոսի 31-ը***	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի տարեկան պլանի (ՈՒԴԱՊ) , Ներդպրոցական վերահսկողության պլանի կազմում , Ներքին կարգապահական կանոնների կազմում և հաստատում	ՈՒԴԱՊ-ը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը: Յուրաքնչյուր հարկում և բակում սահմանել ամենօրյա հերթապահություն	ՄԿԱ և ԴԱ համակարգող

Սեպտեմբեր

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	***Սեպտեմբերի 1-ը***	Միջոցառում՝ նվիրված Գիտելիքի և դպրության օրվան:		ՄԿԱ և ԴԱ համակարգող
2	***Սեպտեմբերի 4-8-ը***	Համադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում:	Համադպրոցական միջոցառումների թեմատիկ (օրացուցային) պլանը կազմվում է ՄԿԱ և ԴԱ համակարգող կողմից և հավանությամբ ներկայացվում տնօրենի հաստատմանը:	ՄԿԱ և ԴԱ համակարգող ԱԽ
3	***Սեպտեմբերի 4-8-ը***	Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանների և դասղեկների տարեկան աշխատանքային պլանների կազմում և հաստատում տնօրենի կողմից:	Դասղեկների տարեկան աշխատանքային պլանները քննարկվում են ծնողական և աշակերտական խորհրդներում և ներկայացվում տնօրենի հաստատմանը	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
4	***Սեպտեմբերի 4-8-ը***	Դասարանական անկյունների ձևավորում	Դասարաններում ստեղծել դասարանական անկյուններ(*օրվա ռեժիմ, դասացուցակ, հերթապահություն, աշակերտական խորհրդի կազմ, ծնողական խորհրդի կազմ)*	ՄԿԱ և ԴԱ համակարգող, Դասղեկներ, դասվարներ
5	***Սեպտեմբերի 4-8-ը***	Դասարանների և հաստատության ծնողական խորհուրդների ձևավորում: Հաստատության ծնողական ժողովի անցկացում:	Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ,ընտրել 3 հոգուց բաղկացած դասարանական ծնողական խորհուրդներ,ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ: Անցկացվում է հաստատության ծնողական ժողով՝ տնօրենի մասնակցությամբ:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
6	***Սեպտեմբերի 4-8-ը***	Սովորողների առաջին ընդհանուր ժողովի հրավիրում: Աշակերտական խորհրդի ձևավորման նախապատրաստում:	Սովորողների առաջին ընդհանուր ժողովը հրավիրվում է տնօրենի կողմից: Աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության 6-12-րդ դասարանների դասարանական ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից, դասարանական ժողովներից հետո՝ 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուսումնական տարվա	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ

			սեպտեմբերի 20-ը:	
7	***Սեպտեմբերի 11-13-ը***	Ծնողազուրկ երեխաների հաշվառում:Ազգային փոքրամասնություն(եզդի) և տեղահանված աշակերտների հաշվառում	Միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակի կազմում և ներկայացում տնօրենին	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
8	***Սեպտեմբերի 1-15-ը***	ԱԽ նախագահի ընտրություններ	Նախընտրական ելույթներ:ԱԽ նախագահների տարեկան ծրագրերի ներկայացում:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, գլխավոր
9	***Սեպտեմբերի 25-29-ը***	Աշակերտական խորհրդի նիստ***(1-րդ նիստ):***	**Օրակարգում՝** **1.**Խորհրդի նախագահի 2023-2024 ուստարում կատարվելիք աշխատանքների մասին,ԱԽ նախագահի տարեկան աշխաանքային ծրագրի ներկայացում և հաստատում **2.**ԱԽ կազմի ձևավորման մասի:ԱԽ խորհրդակցություններ անցկացնելու մասին զեկուցում: **3.** Սահմանել կարգ՝ Յուրաքանչյուր աշակերտ՝դասերը սկսվելուց 15 րոպե առաջ ներկայանա դպրոց՝ ըստ<<Աշխատանքայ ին ժամանակացույցի>>՝հիմք ընդունելով<<Ներքին կարգապահական կանոնները>>	ՄԿԱ և ԴԱ համակարգող
10	***Սեպտեմբերի 18-22-ը***	Սեմինար- խորհրդակցություն դասղեկների հետ***(1-րդ նիստ):***	**Օրակարգում՝** 1.Հաստատությունում ուսումնական ծրագրերի,դասղեկական պլանների կատարման,առարկաների դասավանդման բովանդակության,սովորողների գիտելիքների յուրացման որակի,նրանց վարքի,կարգապահության բարելավման մասին: 2.Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
11	***Սեպտեմբերի 22-ը***	Միջոցառում՝ նվիրված ՀՀ անկախության տոնին:	Կազմել անկախության տոնին նվիրված միջոցառման ծրագիր; 1-4-րդ դասարանցիների մասնակցությամբ կավճանկարչություն, պաստառների պատրաստում:Էքսկուրսիաներ ,այցելութ-յուն	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ

			պատմամշակութային վայրեր,ազգային մշակույթային օջախներ:Ապլիկացիա	
12	***Սեպտեմբերի 25-30-ը***	«Դպրոցը մեր տունն է, այստեղ մենք տանն ենք» թեմայով զրույց	**1**.Դպրոցի շենքն ու գույքը պահպանելու նպատակով զրույցներ անցկացնել աշակերտների հետ **2**.Աշխատանք տանել սովորողների վարքի,կուլտուրայի,վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ

Հոկտեմբեր

ՀՀ	**Ամիս, ամսաթիվը**	**Քայլը**	**Այլ տեղեկություններ**	**Պատասխանատու**
1	***Հոկտեմբերի 2-6-ը***	Թարգմանչած տոնին նվիրված միջոցառում: Գրադանավարի օր:	Գրքի նկատմամբ սեր արթնացնելու նպատակով անցկացնել զրույցներ « Գիրքը հավատարիմ ընկեր »,« Մի գրքի պատմություն », թեմայով:	ՄԿԱ և ԴԱ համակարգող
2	***Հոկտեմբերի 5-ը***	Միջոցառում՝ նվիրված Ուսուցչի տոնին:	Կազմել Ուսուցչի տոնին նվիրված միջոցառման ծրագիր	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
3	***Հոկտեմբերի 2-13-ը***	Երևանի 2804- ամյակին նվիրված միջոցառում ,,**Իմ քարե քաղաք**՞՞խորագրով, **,,Զովքն իմ վրձնով՞՞մրցույթ:**	*Կազմակերպել՝ ա.զբոսանք Երևան քաղաքով բ.ցուցահանդես*	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
4	***Հոկտեմբերի 23-27-ը***	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ:	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
5	***Հոկտեմբերի 27-ը***	Ծնողական խորհրդի նիստ	Քննարկվում են արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները	Տնօրեն, ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
6	***Հոկտեմբերի 16-20-ը***	Աշակերտական խորհրդի նիստ***(2-րդ նիստ):***	**Օրակարգում՝** 1.Առաջարկվում և քննարկվում են միջոցներ սովորողների ստեղծագործական	ՄԿԱ և ԴԱ համակարգող, Աշակերտա կան խորհրդի

			աշխատանքների խթանման համար: 2.5-9-րդ դասսարաններում կազմակերպել և անցկացնել բանավեճեր,քննարկումներ,կլոր սեղաներ և այլն,որոնք էլ ավելի նպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	անդամներ
7	***Հոկտեմբերի 16-23-ը***	Սեմինար- խորհրդակցություն դասղեկների հետ ***(2-րդ նիստ):***	**Օրակարգում՝** 1.Դասղեկական ժամերի մշտադիտարկում: 2. Դասղեկի ժամերը ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և առողջ հասարակության ձևավորման նպատակին: 3. Դժվար դաստիարակվող աշակերտներին,ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների ընդգրկել համադպրոցական միջոցառումներում:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, Աշակերտա կան խորհրդի անդամներ
8	***Հոկտեմբերի 23-27-ը***	Մանկավարժական խորհրդի նիստ***(2-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** ***1***.Նախորդ նիստի որոշումների կատարման ներկայացում. ***2.***Առանց ներդրման պետության կողմից տրամադրվող դասագրքերի վարձավճարների հատկացման և դպրոցի սոցիալապես անապահով սովորողների ցուցակի հաստատում . ***3.***Առարկայական օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների պլանի հաստատում:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, գրադարանավար ուսուցիչներ
9	***Հոկտեմբերի 20-ին***	Աշուն:Բերքահավաք 2023	Կազմակերպել՝ **ա. „Աշնան բերքահավաք՞՞** միջոցառում-ցուցահանդես; բ.**„Գունագեղ աշուն՞՞** խորագրով հանդես	ՄԿԱ և ԴԱ համակարգող, Աշակերտա կան խորհրդի անդամներ դասղեկներ, դասվարներ

Նոյեմբեր

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	**Կիսամյակի ընթացքում**	Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ծնողների համար կար դալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	Սահմանել դպրոցում բաց դռների օր,ապահովել ծնող-ուսուցիչ կապը: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց –ընտանիք կապը: Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների,անհարգելի բացակայությունների նկատմամբ,ժամանակին կանխել դրանք, սերտ համագործակցել ծնողների հետ,անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքիսահմանված կարգով:	ՄԿԱ և ԴԱ համակարգող
2	***Հոկտեմբեր-մայիս***	Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ	Աշակերտների գեղագիտական դաստիարակության ձևավորման նպատակով կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ,այցելություն թանգարաններ և այլ մշակույթային օջախներ:	ՄԿԱ և ԴԱ համակարգող
3	***Նոյեմբերի 6-10-ը***	<< Բուլինգը դպրոցում>>	Անցկացնել զրույց << **Բուլինգը դպրոցում**>>թեմայով	ՄԿԱ և ԴԱ համակարգող Տնօրեն ԱԽ
4	***Նոյեմբերի 10-20-ը***	Հանդիպում ոստիկանության և ներկայացուցչի հետ	Համագործակցությ ունոստիկանության անչափահասների գործերով համապատասխան աշխատակցի հետ:Անցկացնել զրույցներ թմրամիջոցների,ալկոհոլի,ծխա խոտի օգտագործման վնասակար հոտևանքների վերաբերյալ;	ՄԿԱ և ԴԱ համակարգող
5	***Նոյեմբերի 10-20-ը***	Հանդիպում ՏՄԱԿ ներկայացուցչի հետ	Անցկացնել զրույց **<<Մասնագիտական կողմնորոշում**>> թեմայով: Կազմակերպել էքսկուրսիաներքոլեջներ ,բուհեր<<Ուր գնալ սովորելու>>՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:	ՄԿԱ և ԴԱ համակարգող
6	***Նոյեմբերի 27-30-ը***	Ծնողական խորհրդի նիստ:	Քննարկվում են արտադպրոցական և արտադասարանական	ՄԿԱ և ԴԱ համակարգող, ծնողխորհրդի

			աշխատանքները:	նախագահ
7	***Նոյեմբերի 27-30-ը***	Աշակերտական խորհրդի նիստ: ***(3-րդ նիստ):***	**Օրակարգում՝** 1.Հաստատությունում սովորողների իրավունքների պաշտպանության մասին 2.Սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին արձագանքելու ու ընթանք տալու մասին	ՄԿԱ և ԴԱ համակարգող, աշակերտական խորհրդի նախագահ
8	***Նոյեմբերի 27-30-ը***	Սեմինար- խորհրդակցություն դասղեկների հետ ***(3-րդ նիստ):***	**Օրակարգում՝** 1. Ազգային ավանդույթներ և տոներ թեմաների շրջանակում կազմակերպել զրույցներ,ռեֆերատ աշխատանքներ,հանդեսներ: Հայ առաքելական եկեղեցու տոնացույցային օրերիլուսաբանում: 2. Դասղեկի ժամին անցկացնել թեմատիկ զրույց<<Վարքի և վարվեցողության կանոնները>>թեմայով	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ

Դեկտեմբեր

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
	Դեկտեմբերի 4-8-ը	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է թեմատիկ գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման այլ տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
	Մինչև դեկտեմբերի 1-ը	Ֆիզիկակա ն առողջությ անն ուղղված դաստիար ակություն	Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում,վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Նախապատրաստել ու մասնակցել տարածքային,համայնքայ ին, մարզային ,միջդպրոցական սպորտային մրցույթներին:Այդ կապակցությամբ դպրոցում անցկացնել սպորտային համադպրոցական մրցույթներ: Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների ֆիզիկական դաստիարակության խնդիրներին,մասնակցել նախազինակոչիկային սպորտային խաղերին: Մեծացնել սպորտային խմբակներ հաճախող երեխաների թիվը,որը կնպաստի նրանց ֆիզիկական առողջությանը:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
	Դեկտեմբերի 7-ը	Սահմանել քաղաքացիական պաշտպանության օր	Տողան:Ուսումնավար ժական տագնապ:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, զինղեկ
	Դեկտեմբերի 18-25-ը	Սեմինար-խորհրդակցություն դասղեկների հետ ***(4-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** Էկոլոգիա–հիգիենա: ա. Անցկացնել զրույց „Ի՞նչ է էկոլոգիան՛՛,դպրոցի,հարա կից տարածքների դասարանների սանիտարահիգիենիկ պայմանների պահպման վերաբերյալ: բ. Աշակերտների անձնական հիգիենայի նպատակով ուշադրության կենտրոնում պահել դասղեկ-բուժքույր-ծնող փոխադարձ կապը:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ

	Դեկտեմբերի 11-15-ը	Աշակերտական խորհրդի նիստ: ***(4-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** Հաստատությունում ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող սովորողներին օգնություն ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման ու իրականացման գործընթացին մասնակցելու մասին	ՄԿԱ և ԴԱ համակարգող, աշակերտական խորհրդի նախագահ
	Դեկտեմբերի 18-25-ը	Տարեմուտի հանդես	Կազմել ծրագիր ամանորին ընդառաջ:Դպրոցի և դասարանների ձևավորում:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ

Հունվար

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	***Հունվարի 8-12-ը***	*Մանկավարժական խորհրդի նիստ* ***(4-րդ նիստ).***	***Օրակարգում՝*** ***1.***. 2-րդ կիսամյակի աժխատանքների ներկայացում, քննարկում և հաստատում. ***2.*** 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ ԱԽ
2	***Հունվարի 24-28-ը***	«Բանակի օր» տոնին նվիրված միջոցառումներ	Կազմակերպվում է հետևյալ միջոցառումները. • այցելություն «Եռաբլուր» պանթեոն, • հանդիպում Արցախյան պատերազմների վետերանների հետ, • ցերեկույթի կազմակերպում և այլն: Կազմակերպել « Հպարտության անունն է զինվոր» խորագրով նկարչության մրցույթ:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
3	***Հունվարի 6-10-ը***	Հոգևոր դաստիարակություն	Անցկացնել Սուրբ Ծննդյան միջոցառում:Այցելություն եկեղեցի,մասնակցել պատարագի,ունկնդրել Նարեկացու „Մատյան Ողբերգության՛՛ պոեմից հատվածներ	ՄԿԱ և ԴԱ համակարգող, ուսուցիչներ
4	***Հունվարի 29-31-ը***	Սեմինար-խորհրդակցություն դասղեկների հետ ***(5-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** **<<Ռազմահայրենասիրական դաստիարակություն>>** Դասղեկի ժամին աշակերտներին ծանոթացնել ազգային ոգու պահպանման,հայեցի դաստիարակության կարևորությունների՝ռազմահայրենասիրական, ազգայինգաղափարախոսության տեսակետներին: Նախազինակոչային տարիքիտղաների հետ անցկացնել զրույցներ<< ՀՀ ապագա զինվորները>>; Հայրենասիրությունը՝ վեհ գաղափար, Անցկացնել ուսումնավարժական միջոցառումներ	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ, զինղեկ

	Հունվարի 29-31-ը	Աշակերտական խորհրդի նիստ: ***(5-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** Հաստատությունում կառավարման և մանկավարժական խորհուրդներին աջակցելու մասին	ՄԿԱ և ԴԱ համակարգող, աշակերտական խորհրդի նախագահ

<u>Փետրվար</u>

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	***Փետրվարի 5-16-ը***	Սուրբ Սարգսի տոն։Վարդանանք։ Բուն Բարեկենդան։ Տեառնընդառաջ	• Կազմակերպել միջոցառումներ	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ ԱԽ
2	***Փետրվարի 12-16-ը***	Այցելություն գրատպության թանգարան;	• Կազմակերպել այցելություն գրադարաններ	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
3	***Փետրվարի 1-28-ը***	Միջոցառումներ	***1.***Միջոցառում՝ Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ: ***2.***Միջոցառում՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվա կապակցությամբ (տարրական դասարաններում՝ մուլտֆիլմի դիտում, հիմնական և ավագ դասարաններում ֆիլմի դիտում, փաստագրական տվյալների ուսումնասիրություն, այց տուն-թանգարաններ, գրքույկների կազմում: ***3***.Միջոցառում՝ Մայրենի լեզվի օրվան նվիրված	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ
4	***Փետրվարի 26-29-ը***	Սեմինար-խորհրդակցություն դասղեկների հետ ***(6-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** ա.Տարրական դասարաններում խոսել օրվա խորհրդի՝բարության դրսևորման և կարևորության մասին՝հեքիաթներ,առածներ,ասույթներ,ասցվածքներ մեկնաբանելու ,զրույցի միջոցով։ բ.Դասարաններում խոսել մեծն բանաստեղծին,վերհիշել ստեղծագործությունները,կազմակերպել վիկտորինաներ,ինտերակտիվ խաղեր	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ, զինղեկ
5		Աշակերտական խորհրդի նիստ: ***(6-րդ նիստ):***	***Օրակարգում՝*** Համայնքին օժանդակող ծրագրերի իրականացանը աջակցելու մասին	ՄԿԱ և ԴԱ համակարգող, աշակերտական խորհրդի նախագահ

Մարտ

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	***Մարտի 10-20-ը***	Մրցույթ-վիկտորինա անգլերեն և ռուսերեն լեզուներով	Օտար լեզուների ամրապնդման նպատակով հայտարարել լեզուների տասնօրյակ և կազմակերպել մի շարք միջոցառումներ:	ՄԿԱ և ԴԱ համակարգող, ուսուցիչներ
2	***Մարտի 4-8-ը***	Մայրության և գեղեցկության տոն	Կանանց տոների շրջանակում կազմակերպել միջոցարումներ,շնորհավորական տեսահոլովակ պատրասել,	ՄԿԱ և ԴԱ համակարգող ԱԽ
3	***Մարտի 4-8-ը***	Մաթեմատիկայի համաշխարհային օր	Դպրոցում հայտարարել մաթեմատիկայի օր և կազմակերպել ինտերակտիվ ուսուցում,խրախուսական պատվոգրեր շնորհել լավագույնս դրսևորած սովորողներին ;նշել „ՊԻ՞՞տառի տոնը;	ՄԿԱ և ԴԱ համակարգող, մաթեմատիկայի ուսուցիչներ
4	***Մարտի 20-ին***	Երջանկության օր	Զրույց անցկացնել սովորողների հետ **<<Ինչ է երջանկությունը>>**թեմայով,հնարավորություն տալ ինքնաարտահայտվել նկարներով,շարադրություն գրելով	ՄԿԱ և ԴԱ համակարգող
5	***Մարտի 20-25-ը***	Սեմինար-խորհրդակցություն դասղեկների հետ ***(7-րդ նիստ).***	***Օրակարգում՝*** Թեմա **<<Արժեքներ>>**	ՄԿԱ և ԴԱ համակարգող, դասղեկներ, դասվարներ,
6	***Մարտի 20-25-ը***	Աշակերտական խորհրդի նիստ ***(7-րդ նիստ).***	***Օրակարգում՝*** Դպրոցի ր ընտանիքի կապի ամրապնդման մասին:	ՄԿԱ և ԴԱ համակարգող ԱԽ
6	***Մարտի 25-29-ը***	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:	Տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ ,ՄԿԱ և ԴԱ համակարգող դասղեկներ, դասվարներ

Ապրիլ

Հ/Հ	Ամիս, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	***Ապրիլի 1-20-ը***	Ծաղկազարդ։Զատիկ։	Ցուցահանդես Պաստառների պատրաստում և ցուցահանդես-վաճառք	ՄԿԱ և ԴԱ համակարգող
2	***Ապրիլի 23-28-ը***	Անմոռուկների եռագույն պատարագ	Այցելություն ,,Ցեղասպանության թանգարան՛՛;միջոցառում,կոնֆերանս	ՄԿԱ և ԴԱ համակարգող Պատմության ուսուցիչ Ա Խ
3	***Ապրիլի 10-25-ը***	Մշակույթային կյանք	Այցելություն թատրոն,թանգարաններ,կինո,կրկես, աստղադիտարան,բուսաբանական այգի,դենտրոպարկ	ՄԿԱ և ԴԱ համակարգող
4	***Ապրիլի 22-26-ը***	Աշակերտական խորհրդի նիստ ***(8-րդ նիստ).***	***Օրակարգում՝*** **1.** Բնության պահպանման և մաքրման աշխատանքներում աջակցություն ***2.***Մերձդպրոցական տարածքի մաքրում ,կանաչապատում։	ՄԿԱ և ԴԱ համակարգող ԱԽ
5	***Ապրիլի 22-26-ը***	Սեմինար-խորհրդակցություն դասղեկների հետ ***(8-րդ նիստ).***	***Օրակարգում՝*** Թեմա **<<Միջանձնային հարաբերություններ>>** • Դասարանի՝ իբրև խումբ ձևավորում • Հնարավոր խնդիրների լուծում՝ • Խմբավորում ընդդեմ խմբավորման • Աշակերտն ընդդեմ աշակերտի • Խմբավորումն ընդդեմ աշակերտի	ՄԿԱ և ԴԱ համակարգող

Մայիս

Հ/Հ	Ամիսը, Ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ	Պատասխանատու
1	*Մայիսի* *2-3-ը*	Ազգային երգ ու պար փառատոն	Դպրոցում կազմակերպել ազգային պարերի մրցույթ	ՄԿԱ և ԴԱ համակարգող
2	*Մինչև մայիսի* *15-ը*	Աշակերտական խորհրդի նիստ *(Գ-րդ նիստ).*	*Օրակարգում* 2023-2024 ուստարվա աշխատանքներիամ ամփոփում,ԱԽ նախագահի հաշվետվություն	ՄԿԱ և ԴԱ համակարգող ԱԽ
3	*Մայիսի* *13-14-ը*	Սեմինար-խորհրդակցություն դասղեկների հետ *(9-րդ նիստ).*	*Օրակարգում* Սովորողների ժամանցի ու հանգստի կազմակերպում	ՄԿԱ և ԴԱ համակարգող
4	*Մայիսի* *13-17-ը*	Վերջին դաս	Վերջին ղողանջ՝հրաժեշտ դպրոցին;	ՄԿԱ և ԴԱ համակարգող դասղեկ

ՄԿԱ և ԴԱ համակարգող՝ Լ.Հովհաննիսյան